ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259>>

ք. Երևան «02» «11» 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Յու.Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի պատշգամբների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործընթացի իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1135000 (մեկ միլիոն հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք) տոկոսի** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ

որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012213576
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արման-Երեմ» ՍՊԸ
ք. Գավառ, Գ. Միքայելյան 19
«Արդշինբանկ» ՓԲԸ Կամո մ/6
Հ/Հ 2471800301213312
ՀՎՀՀ 08414485

Յու.Ավետիսյան------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«02» « 11 » 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանում | Կենտրոն վարչական շրջանի Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների Տեխնիկական բնութագիրը (յուրաքանչյուր չափաբաժնի համար) | Չ/Մ | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման հասցեն | կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50531140/284 | Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի պատշգամբների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Գ. Լուսավորիչ 12, բն. 28,34, .Խորենացի 3, 1-ին մուտք 3-րդ հարկ, .Մաշտոցի 7 բն.20, .Զաքյան 4 բն.41, .Ամիրյան 11 բն. 22, .Մշտոցի 1բն 18,34,35, .Իսրայելյան 21, 3-րդ մուտք 4-րդ հարկ, .Ամիրյան 8, .Թումանյան 26, .Թումանյան 34, .Տիգրան Մեծ 33, .Տիգրան Մեծ 37, .Տիգրան Մեծ 41, .Տիգրան Մեծ 43, .Հերացի 2, . Հերացի 2ա, .Հերացի 10, .Մյասնիկյան 2, .Մյասնիկյան 2ա, .Կորյունի 3, .Կորյունի 5, .Կորյունի 6, .Կորյունի 6ա, .Կորյունի 8, .Կորյունի 9, .Քրիստափորի 9, .Խորենացի 72m .Նար -Դոս 4, .Արշակունյանց 1, .Արշակունյանց 3, .Վարդանանց 15, .Զարենց 27, .Զարենց 27ա, .Աբովյան 44, 3-րդ հարկ բն. 9, .Աբովյան 33, 2-րդ հարկ բն. 8 | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանում գտնվող բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի 35 հատ փաթեթի /38 պատշգամբի/ (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | դրամ | 110000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ |
| 2 | 50531140/285 | Կենտրոն վարչական շրջանի հենապատերի հիմնանորոգման | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանում գտնվող | դրամ | 35000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մ... |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Քաջազնունու 11, .Վարդանանց 32, .Էջմիածնի խճուղի 367 տնից դեպի հիվանդանոցի կողմ, . Թաիրով փողոց՝ դպրոցի դիմաց, .Իսակով պ. Ավտոկայանից դեպի հաղթանակ կամուրջ | հենապատերի հիմնանորոգման աշխատանքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի 5 հատ փաթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | | | | | մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ |
| 3 | 50531140/286 | Կենտրոն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Տիգրան Մեծի պողոտա 18-20, .Տիգրան Մեծի պողոտա 24-28, .Տիգրան Մեծի պողոտա 36, 36բ, 36գ, 36դ, 36ե, շենքերի բակ, .Թամանյան 3, .Նար-Դոս 1-Զավարյան 2, .Զավարյան 64-Նար-Դոս 75, .Հերացու 16-18-20, .Թումանյան 10 - Սայաթ-Նովա 20, .Մաշտոցի 40ա, .Աբովյան 26, .Վարդանանց 2-րդ նրբ. 4-6, .Բուզանդի 1, .Այգեստան 9-դ փողոց 65 շենք, .Զաքյան 1-3 | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանում գտնվող բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի 15 հատ փաթեթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ | *դրամ* | 200000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև25.12.2020թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | | | | | |
| 4 | 50531140/287 | Թեք տանիքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Լեոի 12 բն. 20, .Չարենցի 27, .Նալբադյան 19 բն. 3, .Մոսկովյան 21, 1-ին մուտք, .Չարենցի 26 բն. 15, .Թումանյան 38 բն. 59, .Վարդանանց 4 բն. 35, .Թումանյան 10 բն. 13, .Մաշտոցի 31 բն. 15, .Սայաթ-Նովա 5 բն. 20, .Նալբանդյան 50, .Տիգրան Մեծ 36, .Արամի 92 17, .Սպենդարյան 4, .Սպենդարյան 6, .Փարպեցի 4, .Փարպեցի 6, .Մաշտոցի 21 բն. 34 , .Ամիրյան 5, .Իսակով 48, .Մոսկովյան 36, .Տիգրան Մեծ 33. բն.16 | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանում գտնվող բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի 22 հատ փաթեթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | ***դրամ*** | 340000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ |
| 5 | 50531140/288 | Կենտրոն վարչական շենքի նախասրահի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Տերյան 44 | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շենքի նախասրահի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում | ***դրամ*** | 40000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | | | | | |
| 6 | 50531140/289 | Կենտրոն վարչական շենքի 2-րդ հարկի աշխատասենյակների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններՏերյան 44 | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շենքի 2-րդ հարկի աշխատասենյակների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | ***դրամ*** | 30000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև25.12.2020թ |
| 7 | 50531140/290 | Շենքերի ճակատային պատերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Պուշկին 43, .Մոսկովյան 36 , .Բրյուսով 20, .Կողբացի 42, .Խորենացի 25, .Խորենացի 27, .Խորենացի 29, . Խորենացի 43, .Խորենացի 45, .Տ. Մեծ 30, .Նալբանդյան 23, .Նալբանդյան 98, | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանում գտնվող շենքերի ճակատային պատերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի 16 հատ փաթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված | ***դրամ*** | 120000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց օրվանից մինչև 25.12.2020թ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | .Մաշտոցի 49, .Կորյունի 1, .Կորյունի 3, .Կորյունի 5 | թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | | | | | |
| 8 | 50531140/291 | Կենտրոն վարչական շրջանի մայթերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ<br>. 12-րդ փողոց /Սարալանջի շրջանցիկ ճանապարհ/<br>. Ոսկերիչների փողոց<br>.Չարենցի փողոց /Կորյուն փողոցից մինչև Նար-Դոսի փողոց/<br>.Արգիշտի 11-ից մինչև 17 /Խորհրդարանի փողոց/<br>.Միեր Մկրտչյան փողոց, .Դեղատան փողոց, .Չարենցի փողոց /Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքից մինչև ֆիզկուլտուրնիկների փողոց /, .Բուզանդ փողոց /Աբովյանից դեպի Քոչինյան/, .Սարյան փողոց /Կոմպոզիտորների միության աստիճանների դիմաց/, .Չարենց Կորյուն փողոցների խաչմերուկ/, .Տերյան փողոց /Արամի փողոցից մինչև Պուշկինի փողոց/, .Կարեն Դեմիրճյան փողոց /Մաշտոցի պողոտայից մինչև Սարյան փողոց/, .Պռոշյան փողոց 1-ին նրբանցք, .Ֆրիկի փողոց /Դ. Դեմիրճյան փողոցից մինչև Սարյան փողոց/ | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանի մայթերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի 14 հատ փաթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան.<br>5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | ***դրամ*** | 200000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2020թ |
| 9 | 50531140/292 | Կենտրոն վարչական շրջանի ներբակային աստիճանների հիմնանորոգման | 1. Առաջադրանքի վերջնական նպատակն է Կենտրոն վարչական շրջանի ներբակային աստիճանների հիմնանորոգման աշխատանքների | ***դրամ*** | 60000 | 1 | Տերյան 44 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններՄ. Սարյան փ. 2 շենքից մինչև Գրիգոր Հարությունյան փողոց/, .Մոսկովյան 36,38 շենքերի, . Մ.Սարյան 26-ից մինչև Կոնդ թաղամաս , .Այգեստան 11-րդ փ. 239շ. մինչև Այգեստան 9-րդ փ., .Պուշկին 62-ից մինչև Սարյան փ., Կենտրոն Վարչական շրջանի բակ, .Մ. Սարյան 15-ից մինչև Դեմիրճյան 25 | նախագծանախահաշվային փաստաթղթերի 7 հատ փաթի (որոնք կտրամադրվեն Պատվիրատուի կողմից) փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:<br>2. Կատարողը պետք է փորձաքննությունն իրականացնի նախագծման աշխատանքներին զուգընթաց<br>3. Կատարողի կողմից հայտնաբերված թերությունները ենթակա են լրամշակման նախագծային կազմակերպության կողմից, որից հետո կրկնակի ստուգումից հետո Կատարողը 2-օրյա ժամկետում ներկայացնում է վերջնական եզրակացությունը:<br>4. Կատարողը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել գործող օրենսդրական, իրավական ու նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխան. 5. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով | | | | | օրվանից մինչև25.12.2020թ |
| | | | **Ընդամենը** | | 1135000 | | | |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012213576
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Արման-Երեմ» ՍՊԸ
ք. Գավառ, Գ. Միքայելյան 19
«Արդշինբանկ» ՓԲԸ Կամո մ/ճ
Հ/Հ 2471800301213312
ՀՎՀՀ 08414485

Յու.Ավետիսյան______________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 02 » « 11 » 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50531140/284 | Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի պատշգամբների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Գ. Լուսավորիչ 12, բն. 28,34, .Խորենացի 3, 1-ին մուտք 3-րդ հարկ, .Մաշտոցի 7 բն.20, .Զաքյան 4 բն.41, .Ամիրյան 11 բն. 22, .Մշտոցի 1բն 18,34,35, .Իսրայելյան 21, 3-րդ մուտք 4-րդ հարկ, .Ամիրյան 8, .Թումանյան 26, .Թումանյան 34, .Տիգրան Մեծ 33, .Տիգրան Մեծ 37, .Տիգրան Մեծ 41, .Տիգրան Մեծ 43, .Հերացի 2, . Հերացի 2ա, .Հերացի 10, .Մյասնիկյան 2, .Մյասնիկյան 2ա, .Կորյունի 3, .Կորյունի 5, .Կորյունի 6, .Կորյունի 6ա, .Կորյունի 8, .Կորյունի 9, .Քրիստափորի 9, .Խորենացի 72m .Նար -Դոս 4, .Արշակունյանց 1, .Արշակունյանց 3, .Վարդանանց 15, .Զարենց 27, .Զարենց 27ա, .Աբովյան 44, 3-րդ հարկ բն. 9, .Աբովյան 33, 2-րդ հարկ բն. 8 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 110000 | 110000 | 110000 |
| 2 | 50531140/285 | Կենտրոն վարչական շրջանի հենապատերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Քաջազնունու 11, .Վարդանանց 32, .Էջմիածնի խճուղի 367 տնից դեպի հիվանդանոցի կողմ, . Թաիրով փողոց՝ դպրոցի դիմաց, .Իսակով պ. Ավտոկայանից դեպի հաղթանակ կամուրջ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 35000 | 35000 | 35000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 50531140/286 | Կենտրոն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Տիգրան Մեծի պողոտա 18-20, .Տիգրան Մեծի պողոտա 24-28, .Տիգրան Մեծի պողոտա 36, 36բ, 36գ, 36դ, 36ե, շենքերի բակ, .Թամանյան 3, .Նար-Դոս 1-Զավարյան 2, .Զավարյան 64-Նար-Դոս 75, .Հերացու 16-18-20, .Թումանյան 10 - Սայաթ-Նովա 20, .Մաշտոցի 40ա, .Աբովյան 26, .Վարդանանց 2-դր նրբ. 4-6, .Բուզանդի 1, .Այգեստան 9-դ փողոց 65 շենք, .Զաքյան 1-3 | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 200000 | 200000 | 200000 |
| 4 | 50531140/287 | Թեք տանիքների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Լեոի 12 բն. 20, .Չարենցի 27, .Նալբադյան 19 բն. 3, .Մոսկովյան 21, 1-ին մուտք, .Չարենցի 26 բն. 15, .Թումանյան 38 բն. 59, .Վարդանանց 4 բն. 35, .Թումանյան 10 բն. 13, .Մաշտոցի 31 բն. 15, .Սայաթ-Նովա 5 բն. 20, .Նալբանդյան 50, .Տիգրան Մեծ 36, .Արամի 92 17, .Սպենդարյան 4, .Սպենդարյան 6, .Փարպեցի 4, .Փարպեցի 6, .Մաշտոցի 21 բն. 34 , .Ամիրյան 5, .Իսակով 48, .Մոսկովյան 36, .Տիգրան Մեծ 33. բն.16 | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 340000 | 340000 | 340000 |
| 5 | 50531140/288 | Կենտրոն վարչական շենքի նախասրահի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Տերյան 44 | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 40000 | 40000 | 40000 |
| 6 | 50531140/289 | Կենտրոն վարչական շենքի 2-րդ հարկի աշխատասենյակների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Տերյան 44 | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | … % | 30000 | 30000 | 30000 |
| 7 | 50531140/290 | Շենքերի ճակատային պատերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Պուշկին 43, .Մոսկովյան 36 , .Բրյուսով 20, .Կողբացի 42, .Խորենացի 25, .Խորենացի 27, .Խորենացի 29, . Խորենացի 43, .Խորենացի 45, .Տ. Մեծ 30, .Նալբանդյան 23, .Նալբանդյան 98, .Մաշտոցի 49, .Կորյունի 1, .Կորյունի 3, .Կորյունի 5 | … % | … % | … % | … % | … % | … 3 % | … % | … % | … % | … % | 120000 | 120000 | 120000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 50531140/291 | Կենտրոն վարչական շրջանի մայթերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ . 12-րդ փողոց /Սարալանջի շրջանցիկ ճանապարհ/ . Ոսկերիչների փողոց .Չարենցի փողոց /Կորյուն փողոցից մինչև Նար-Դոսի փողոց/ .Արգիշտի 11-ից մինչև 17 /Խորհրդարանի փողոց/ .Միեր Մկրտչյան փողոց, .Դեղատան փողոց, .Չարենցի փողոց /Չարենցի փողոցի 2-րդ նրբանցքից մինչև ֆիզկուլտուրնիկների փողոց /, .Բուզանդ փողոց /Աբովյանից դեպի Քոչինյան/, .Սարյան փողոց /Կոմպոզիտորների միության աստիճանների դիմաց/, .Չարենց Կորյուն փողոցների խաչմերուկ/, .Տերյան փողոց /Արամի փողոցից մինչև Պուշկինի փողոց/, .Կարեն Դեմիրճյան փողոց /Մաշտոցի պողոտայից մինչև Սարյան փողոց/, . Պռոշյան փողոց 1-ին նրբանցք, .Ֆրիկի փողոց /Դ. Դեմիրճյան փողոցից մինչև Սարյան փողոց/ | | | | | | | | | | | 200000 | 200000 | 200000 |
| 9 | 50531140/292 | Կենտրոն վարչական շրջանի ներբակային աստիճանների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ Մ. Սարյան փ. 2 շենքից մինչև Գրիգոր Հարությունյան փողոց/, .Մոսկովյան 36,38 շենքերի, . Մ.Սարյան 26-ից մինչև Կոնդ թաղամաս , .Այգեստան 11-րդ փ. 239շ. մինչև Այգեստան 9-րդ փ., .Պուշկին 62-ից մինչև Սարյան փ., Կենտրոն Վարչական շրջանի բակ, .Մ. Սարյան 15-ից մինչև Դեմիրճյան 25 | | | | | | | | | | | 60000 | 60000 | 60000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012213576
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ----------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արման-Երեմ» ՍՊԸ
ք. Գավառ, Գ. Միքայելյան 19
«Արդշինբանկ» ՓԲԸ Կամո մ/ճ
Հ/Հ 2471800301213312
ՀՎՀՀ 08414485

Յու.Ավետիսյան----------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«     »          20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«     » «          » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«    »    20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը    Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. _______________________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն

_______________________
ազգանուն, անուն
_______________________
ստորագրություն

Հավելված 5.1
«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Գավառ

«23» հոկտեմբերի 2020թ.

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն դեմս Ընկերության տնօրեն Յու. Ավետիսյանի /Ն/ք 000819193/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 1. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Արման-Երեմ» ՍՊԸ
ք. Գավառ, Գ. Միքայելյան 19
Արդշինբանկ ՓԲԸ «Կամո» մ/ճ
հ/հ 2471800301213312

«Արման-Երեմ» ՍՊԸ տնօրեն՝ Յու. Ավետիսյան

Կ.Տ

27,10,2020թ.

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ** | |
| 2. Թիվ 8 | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ «Արման-Երեմ» ՍՊԸ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱՇԻԲ ՓԲԸ «Կամո» մասնաճյուղ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 2471800301213312 | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08414485 | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ 900015211429 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 113500 (մեկ հարյուր տասներեք հազար հինգ հարյուր) | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով) ՀՀ դրամ AMD 051 | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը) | |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/__________/<br>/__________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br>/__________<br>21.բ.<br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/__________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/__________/<br>/ստորագրություն/<br>23.բ.<br>Կ.Տ.<br>23.գ. կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

«ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» 08414485

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 55

27 հոկտեմբերի 2020թ.

| | | | |
|---|---|---|---|
| Վճարող<br>կոդ 71. 08414485 | «Արման-Երեմ» ՍՊԸ | ԴԵԲԵՏ | գումար |
| Վճարողի բանկը | «Արդշինբանկ» ՓԲԸ «Կամո» մ/ճ | 2471800301213312<br>կոդ | 1135000 |
| Ստացող<br>կոդ | ՀՀ ֆինանսների նախարարություն | ԿՐԵԴԻՏ | |
| Ստացողի բանկը | Կենտրոնական Գանձապետարան | 900008000698<br>կոդ | |
| Մեկ միլիոն հարյուր երեսունհինգ հազար ՀՀ դրամ<br>գումարը տառերով | | | տույժը օրվա որից N |

Վճարման նշանակությունը, ապրանքի անվանումը, կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները, ապրանքային փաստաթղթերի համարները և գումարները

ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259 ծածկագրով որակավորման ապահովում

Գումարը տույժով

Գործ տեսակ

Վճարման ծածկագիր

Վճարման ժամկետ

Հերթակ. վճարում

Կ.Տ.

Հաճախորդի ստորագրությունները

Բանկում ձևակերպված է

«27» 10 2020թ.

բանկի ստորագրությունները

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ "ARDSHINBANK" CJSC 02566492 10901

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 56

30 հոկտեմբերի 2020թ.

| | | | |
|---|---|---|---|
| Վճարող «Արման-Երեմ» ՍՊԸ | կոդ 71. 08414485 | ԴԵԲԵՏ 2471800301213312 | գումար |
| Վճարողի բանկը «Արդշինբանկ» ՓԲԸ «Կամո» մ/ճ | | կոդ | 252700 |
| Ստացող ՀՀ ֆինանսների նախարարություն | կոդ | ԿՐԵԴԻՏ 900008000698 | |
| Ստացողի բանկը Կենտրոնական Գանձապետարան | | կոդ | |

Երկու հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր ՀՀ դրամ

գումարը տառերով

| | |
|---|---|
| տույժը որից | օրվա N |
| Գումարը տույժով | |
| Գործ. տեսակ | |
| Վճարման նշանակ. | |
| Վճարման ժամկետը | |
| Հերթակ. վճարում | |

Վճարման նշանակությունը, ապրանքի անվանումը, կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները, ապրանքային փաստաթղթերի համարները և գումարները

ԵՔ-ԳՀԾՁԲ-20/259 ծածկագրով որակավորման ապահովում

Կ.Տ.

Հաճախորդի ստորագրությունները

Բանկում ձևակերպված է «30» 10 20 20 թ.

բանկի ստորագրությունները